

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ԱՐՏԱՇԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2015Թ.

ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

10.07.2015թ. ին Արարատի մարզի Վերին Արտաշատ համայնքում տեղի ունեցավ հանրային լսում

Նախագահությամբ համայնքի ղեկավար՝ Ա. Ղազարյանի

Քարտուղարությամբ՝ աշխատակազմի քարտուղար Ն. Պետրոսյանի

Մասնակցում էին՝ ավագանու անդամները, գյուղապետարանի աշխատակազմը, դպրոցի տնօրենը, բուժ. ամբուլատորիայի աշխատակիցները, արվեստի դպրոցի և մանկապարտեզի աշխատակիցները և համայնքի բնակիչներից ներկայացուցիչներ:


Լսեցին Վերին Արտաշատ համայնքի ղեկավար Ա. Ղազարյանի հաշվետվությունը 2015թ. 1-ին կիսամյակում կատարած աշխատանքների վերաբերյալ:

Արձանագրվեց, որ 2015թվականի 1-ին կիսամյակում գյուղապետարանի կողմից համայնքում կատարվել են հետևյալ աշխատանքները.

- Գյուղապետարանը բնակիչներից ստացել է 160 դիմում, ինչպես նաև բանավոր հարցումներ, որոնք քննարկվել են գյուղապետարանի աշխատակազմի և ավագանու նիստերի ժամանակ և տրվել են համապատասխան լուծումներ:
- Գյուղապետարանը ստացել է 30 պաշտոնական նամակներ մարզպետարանից և տարբեր կազմակերպություններից, որոնք քննարկել են և սահմանված ժամկետներում տրվել են պատասխաններ:
- Բնակիչներին տրվել է 407 տեղեկանք:
- Քաղաքացիների գրավոր և բանավոր դիմումների հիման վրա կատարվել են հողամասերի չափագրման և սահմանների ճշտագրման աշխատանքներ:
- Տեղադրվել են տաղավարներ համայնքի բնակիչների ժամանցը նորմալ կազմակերպելու համար:
- Հրատապ ծրագրերի շրջանակներում կառավարության կողմից կառուցվել է 2200գծմ երկարությամբ ոռոգման նոր ջրագիծ:
- 2015թ.բյուջեի սեփական եկամուտները, որոնք կազմում են տարեկան 33854.3 հազ. դրամ, մուտքագրվել է 16039.6 հազ. դրամ, այսինքն կատարողական տարեկան նկատմամբ կազմել է 47.3 տոկոս: Ոստ առանձին հարկատեսակների եկամուտները կազմել են՝

1. Հողի հարկ -- պլան 20393.4 հազ. դրամ , մուտքագրվել է 7999.6 հազ. դրամ կամ 39.2 տոկոս:
 2. Գույքահարկ -- պլան 11519.4 հազ. դրամ , մուտքագրվել է 6988.2 հազ. դրամ կամ 60.6 տոկոս:
 3. Տեղական տուրք -- պլան 560.0 հազ. դրամ , մուտքագրվել է 333.5 հազ. դրամ կամ 59.5 տոկոս:
 4. Հողի վարձակալություն -- պլան 1381.5 հազ. դրամ , մուտքագրվել է 718.2 հազ. դրամ կամ 51.9 տոկոս:
- Պետական աջակցության ծրագրի շրջանակներում համայնքի 520 բնակիչների համար ստացվել են բաժանվել է 40 տոննա ազոտական , 6100 կգ ֆոսֆորական , 2250 կգ կալիումական պարարտանյութ:
 - Համայնքում իրականացվել են մի շարք սոցիալ - տնտեսական միջոցառումներ և ծրագրեր , որոնցից են՝
 - Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին տրվել է 2000.0 հազ. դրամ ֆինանսական աջակցություն
 - Մահացածների ընտանիքներին տրվել է 320.0 հազ. դրամ ֆինանսական աջակցություն :
 - Հասարակական կազմակերպություններին տրվել է 120.0 հազ. դրամ ֆինանսական աջակցություն: Համայնքում ըստ գործող գրաֆիկի կատարվում է փողոցների աղբահանություն:
 - Մեծ շուքով համայնքում անց են կացվել միջոցառումներ նվիրված Մարտի 8-ին և Ապրիլի 7-ին , որի առթիվ 600.0 հազ. դրամի համայնքում աշխատող կանանց տրվել է նվերներ : Կատարվել են նաև միջոցառումներ եղևոնի գոհերի հիշատակին , մայիսի 28-ին , հունիսի 1-ին՝ երեխաների պաշտպանության օրվան նվիրված, որոնց մասնակցել են համայնքի և հարակից համայնքներից հրավիրված բնակիչներ:
 - Գյուղապետարանը մասնակցել է դպրոցի վերջին զանգի անցկացման կազմակերպման աշխատանքներին՝ ավարտական դասարաններին տրամադրելով 100.0 հազ. դրամ ֆինանսական աջակցություն:

Վերին Արտաշատ համայնքի ղեկավար



Ղազարյան